Հավելված
ՀՀ կառավարության 2025 թվականի
օգոստոսի 14-ի N 1148 - Ն որոշման

«Հավելված N 17
ՀՀ կառավարության 2019 թվականի
հունիսի 6-ի N 730-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՍՏՈՒԳԱԹԵՐԹ
ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (ԱՏԳ ԱԱ 2402 10 000 0, 2402 20 100 0, 2402 20 900 0, 2403 11 000 0, 2403 19 100 0, 2403 19 900 0, 2404 ծածկագրին կամ G 46.17, 46.21, 46.35, 46.39 և 46.90, G47.11, 47.26, 47.81 և 47.9 ՏԳՏ դասակարգչին համապատասխան)

1.ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

____ _____ 20 թ.

_____ _____ _____
(տեսչական մարմնի անվանումը) (գտնվելու վայրը) (հեռախոսահամարը)

Անձնական կոդ	_____ (պաշտոնը)	_____ (անունը, ազգանունը, հայրանունը)
Անձնական կոդ	_____ (պաշտոնը)	_____ (անունը, ազգանունը, հայրանունը)
Անձնական կոդ	_____ (պաշտոնը)	_____ (անունը, ազգանունը, հայրանունը)

Ստուգման սկիզբը (ամսաթիվ)_____ 20 թ. ավարտը _____20 թ.

_____

տնտեսավարող սուբյեկտի անվանումը (անունը, ազգանունը)

(ՀԿՀՀ)

_____

_____

_____

(տնտեսավարող սուբյեկտի գործունեության ոլորտը)

_____

(պետռեգիստրի համարը)

_____

տնտեսավարող սուբյեկտի գտնվելու վայրը (բնակության վայրը)

_____

(հեռախոսահամարը)

_____

(տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ լիազորված անձի անունը, ազգանունը, հայրանունը)

_____

(հեռախոսահամարը)

Ստուգման հրամանի ամսաթիվը ____ _____20 թ. համարը _____

Ստուգման նպատակը/Ընդգրկված հարցերի համարներ

_____

_____

_____

2. ՀԱՐՑԱՇԱՐ

ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Հարցեր Մաքսային միության տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 12-ի 107-Ն որոշմամբ հաստատված «Ծխախոտային արտադրանքի մասին տեխնիկական կանոնակարգ» (ՄՄ ՏԿ 035/2014) Մաքսային միության տեխնիկական կանոնակարգով իրականացվող վերահսկողության վերաբերյալ:

Աղյուսակ 1

NN ը/կ	Հարցը	Հարցի համար հիմք հանդիսացող իրավական նորմը	Ստուգման անցկացման մեթոդը	Կշիռը	Մեկնաբանություն	Պատասխան		
						Այո	Ոչ	Չ/պ
1	2	3	4	5	6	7	8	9
1.	Շրջանառության մեջ դրված ծխախոտային արտադրատեսակները անցե՞լ են համապատասխանության գնահատման ընթացակարգ՝ համապատասխանության հայտարարագիր	Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 12-ի 107-Ն որոշմամբ հաստատված ՄՄ ՏԿ 035/2014 կանոնակարգի (այսուհետև՝ Կանոնակարգ) 9-րդ և 34-րդ կետեր	փաստաթղթային	20				
2.	Ծխախոտային արտադրանքը մակնշվե՞լ է արտադրանքի շրջանառության միասնական նշանով	Կանոնակարգի 10-րդ կետ	տեսազննում	1.1				
3.	Արդյո՞ք ծխախոտային արտադրանքի արտադրության ժամանակ չեն օգտագործվում Հավելվածում* ներկայացված բաղադրիչ նյութերը	Կանոնակարգի 11-րդ կետ	լաբորատոր փորձարկում, տեսազննում	3				

4.	Արդյո՞ք մեկ սիգարետի (ֆիլտրով կամ առանց ֆիլտրի) ծխի մեջ խեժի և նիկոտինի պարունակությունը չի գերազանցում 10 մգ/սիգ.-ը և 1,0 մգ/սիգ.-ը	Կանոնակարգի 12-րդ կետ	լաբորատոր փորձարկում, տեսազննում	3				
5.	Արդյո՞ք ֆիլտրով մեկ սիգարետի ծխի մեջ ածխածնի մենօքսիդի պարունակությունը չի գերազանցում 10 մգ/սիգ.-ը	Կանոնակարգի 13-րդ կետ	լաբորատոր փորձարկում, տեսազննում	3				
6.	Ծխախոտային արտադրատեսակների սպառողների համար նախատեսված տեղեկատվությունը զետեղվա՞ծ է սպառողական փաթեթվածքի (ներդիր թերթիկի) վրա և պարունակում է՝	Կանոնակարգի 19-րդ կետ						
1)	ծխախոտային տեսակի անվանումը	Կանոնակարգի 19-րդ կետ, ա ենթակետ	տեսազննում	0.7				
2)	ծխախոտային արտադրանքի անվանումը	Կանոնակարգի 19-րդ կետ, բ ենթակետ	տեսազննում	0.7				
3)	իրավաբանական անձի անվանումը, որն արտադրողի կողմից լիազորվել է սպառողների կողմից ներկայացվող պահանջներն ընդունելու համար, դրա գտնվելու վայրը (երկիրն ու հասցեն, այդ թվում՝ փաստացի) (այդպիսի անձի բացակայության դեպքում նշվում է, որ սպառողների կողմից ներկայացվող պահանջներն ընդունվում են տվյալ ծխախոտային արտադրանքի՝ պետության տարածքում գրանցված արտադրողի կողմից)	Կանոնակարգի 19-րդ կետ, գ ենթակետ	տեսազննում	0.7				
4)	արտադրողի, արտադրողի կողմից լիազորված անձի կամ ներմուծողի անվանումը, դրա գտնվելու վայրը (երկիրն ու հասցեն, այդ թվում՝ փաստացի) և (կամ) հսկող կազմակերպության անվանումը (առկայության դեպքում), դրա գտնվելու վայրը (երկիրն ու հասցեն, այդ թվում՝ փաստացի)	Կանոնակարգի 19-րդ կետ, դ ենթակետ	տեսազննում	0.7				

5)	տեղեկություններ ֆիլտրի առկայության վերաբերյալ (ֆիլտրով ծխելու ծխախոտային արտադրատեսակների դեպքում)	Կանոնակարգի 19-րդ կետ,ե ենթակետ	տեսազննում	0.7				
6)	տեղեկություններ հատերի թվի (հատով ծխախոտային արտադրատեսակների դեպքում) կամ զտաքաշի (գ) (քաշով ծխախոտային արտադրատեսակների դեպքում) վերաբերյալ	Կանոնակարգի 19-րդ կետ, զ ենթակետ	տեսազննում	0.7				
7)	ծխախոտային արտադրատեսակների օգտագործման վնասակարության մասին նախազգուշացում	Կանոնակարգի 19-րդ կետ, է ենթակետ	տեսազննում	0.7				
8)	տեղեկություններ ծխախոտային արտադրանքի առավելագույն մանրածախ գնի, արտադրման ամսի ու տարեթվի վերաբերյալ	Կանոնակարգի 19-րդ կետ, թ ենթակետ	տեսազննում	0.7				
9)	տեղեկատվություն սիստեմային (ներբույսային) թույների, կանցերոգեն և մուտագեն նյութերի վերաբերյալ	Կանոնակարգի 19-րդ կետ, ժ ենթակետ	տեսազննում	0.7				
7.	Սպառողական փաթեթվածքի (ներդիր թերթիկի) վրա զետեղված տեղեկատվությունը չի՞ պարունակում սննդամթերքի, դեղամիջոցների, դեղաբույսերի պատկերներ, ինչպես նաև բառեր կամ բառակապակցություններ, որոնց շնորհիվ ծխախոտային արտադրատեսակն ուղղակիորեն կամ անուղղակիորեն ասոցացվում է սննդամթերքի, դեղամիջոցի կամ դեղաբույսի հետ	Կանոնակարգի 21-րդ կետ	տեսազննում	1.0				
8.	Սպառողական փաթեթվածքի (ներդիր թերթիկի) վրա զետեղա՞ծ չեն ծխախոտային արտադրատեսակների ծխի մեջ խեժի, նիկոտինի ու ածխածնի մենօքսիդի պարունակության վերաբերյալ քանակական ցուցանիշներ	Կանոնակարգի 22-րդ կետ	տեսազննում	1.0				

9.	Սպառողական փաթեթվածքի (ներդիր թերթիկի) վրա զետեղա՞ծ չէ տեղեկատվություն, որը պարունակում է պնդումներ հետևյալի մասին	Կանոնակարգի 22-րդ կետ						
1)	տվյալ ծխախոտային արտադրատեսակի (ծխախոտային արտադրատեսակի տեսակի) օգտագործումը նվազեցնում է ծխախոտային արտադրատեսակների օգտագործման հետ կապված հիվանդությունների առաջացման վտանգը	Կանոնակարգի 22-րդ կետ, ա ենթակետ	տեսազննում	1.2				
2)	տվյալ ծխախոտային արտադրատեսակը (ծխախոտային արտադրատեսակի տեսակը) պակաս վտանգավոր է առողջության համար, քան մյուս ծխախոտային արտադրատեսակները (ծխախոտային արտադրատեսակների մյուս տեսակները)	Կանոնակարգի 22-րդ կետ, բ ենթակետ	տեսազննում	1.2				
3)	տվյալ ծխախոտային արտադրատեսակի (ծխախոտային արտադրատեսակի տեսակի) օգտագործման հետ կապված հիվանդությունների առաջացման վտանգը նվազել է ծխախոտային արտադրատեսակի օգտագործման ժամանակ առաջացող նյութի առկայության (բացակայության, ցածր պարունակության) շնորհիվ:	Կանոնակարգի 22-րդ կետ, գ ենթակետ	տեսազննում	1.2				
10.	Սպառողական փաթեթվածքի վրա զետեղվող տեղեկատվությունը, բացառությամբ ծխախոտային արտադրանքի անվանման, տեղադրվա՞ծ է այնպես, որ սպառողական փաթեթվածքը բացելիս մակագրությունների ամբողջականությունը չխախտվի	Կանոնակարգի 24-րդ կետ	տեսազննում	1.0				
11.	Սպառողական փաթեթվածքի վրա զետեղվող տեղեկատվությունը տպագրվա՞ծ է փաթեթավորման թափանցիկ թաղանթի կամ արտաքին փաթեթավորման որևէ այլ նյութի վրա, որը ծածկված չէ տպագրված այլ տեղեկատվությամբ	Կանոնակարգի 25-րդ կետ	տեսազննում	1.0				

12.	Ծխախոտային արտադրատեսակների սպառողների համար նախատեսված տեղեկատվությունը զետեղվա՞ծ է և՛ ռուսերեն, և՛ հայերեն լեզուներով	Կանոնակարգի 26-րդ կետ	տեսազննում	1.0				
13.	Ծխախոտային արտադրանքի յուրաքանչյուր սպառողական փաթեթվածքի (ներդիր թերթիկի) վրա նախազգուշացվո՞ւմ է ծխախոտային արտադրատեսակների օգտագործման վնասակարության մասին, ինչպես նաև նախազգուշացումների էսքիզները արդյո՞ք համապատասխանում են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2016 թվականի մարտի 17-ի «Ծխախոտային արտադրատեսակների օգտագործման վնասակարության մասին նախազգուշացումների էսքիզները և ծխախոտային արտադրանքի սպառողական փաթեթվածքի վրա դրանք զետեղելու պարամետրերը հաստատելու մասին» N 18 որոշմամբ հաստատված պարամետրերին	Կանոնակարգի 27-րդ կետ	տեսազննում	1.0				
14.	Նախազգուշացումը տեղադրվա՞ծ է սպառողական փաթեթվածքի դիմային ու հակառակ հիմնական կողմերի վերին հատվածներում և հակառակ հիմնական կողմի վրա, եթե այն ծածկված է դրոշմանիշով կամ վնասվում է սպառողական փաթեթավորումը բնականոն բացելու ընթացքում, տեղադրվա՞ծ է ստորին հատվածում, որը պետք է զբաղեցնի այդ կողմերի մակերեսի առնվազն 50 տոկոսը	Կանոնակարգի 29-րդ կետ	տեսազննում	1.0				
15.	Ծխախոտային արտադրատեսակների սպառողական փաթեթվածքի դիմային հիմնական կողմի վրա ծխախոտային արտադրատեսակների օգտագործման	Կանոնակարգի 29-րդ կետ	տեսազննում	1.0				

	վնասակարության մասին նախազգուշացման տեքստը զետեղվա՞ծ է հայերեն լեզվով, իսկ հակառակ հիմնական կողմը՝ ռուսերենով							
16.	Ծխախոտային արտադրատեսակների օգտագործման վնասակարության մասին նախազգուշացումների էսքիզները զետեղվում են ծխախոտային արտադրանքի՝ հավասար քանակությամբ սպառողական փաթեթվածքների վրա	Կանոնակարգի 29-րդ կետ	տեսազննում	1.0				
17.	Սիստեմային (ներբույսային) թույների, կանցերոգեն և մուտագեն նյութերի պարունակության վերաբերյալ տեղեկատվությունը զետեղվա՞ծ է ծխախոտային արտադրանքի սպառողական փաթեթվածքի կողմնային մակերևույթի վրա՝ սպառողական փաթեթվածքի հիմնական գույնին հակադիր գույնով, Helvetica տառատեսակով, հետևյալ մակագրությամբ՝ «Պարունակում է սիստեմային (ներբույսային) թույներ, կանցերոգեն և մուտագեն նյութեր», որը զբաղեցնում է ծխախոտային արտադրանքի սպառողական փաթեթվածքի կողմնային մակերևույթի մակերեսի ոչ պակաս, քան 17 տոկոսը	Կանոնակարգի 30-րդ կետ	տեսազննում	1.0				

Հավելված*

Նյութերի ցանկ որոնք չի թույլատրվում օգտագործել որպես բաղադրիչներ ծխախոտային արտադրանքի արտադրության ժամանակ

1. Նյութեր՝
ագարինաթթու (Acidumagaricinicum).
կեչու ձյութայուղ (Oleum Betulaeempyreumaticum).
դառը նուշի յուղ (Oleum Amygdalarumamarum)՝ ազատ կամ կապված սինիլաթթվի պարունակությամբ.
սասաֆրասի յուղ (Oleum Sassafratis).
գիհու ձյութայուղ (Oleum Juniperi Empyreumaticum).

կամֆորայի յուղ (Oleum Camphoratum).
կամֆորա. կումարին. կանճրակ.
կենսաածառ՝ թույա:
2. Այն նյութերը, որոնց շրջանառությունն արգելված է՝ Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքի անդամ պետությունների միջազգային պայմանագրերին համապատասխան:
3. Բուրավետիչ և համային նյութեր՝ պատրաստված դառը և քաղցր համով մորմի փայտե ցողունից (Stipites Dulcamarae), կամֆորայի ծառի փայտից (Lignum Camphorae), բազմոտիկ սովորական կոճղարմատից (Rhizoma Poiypodii).
ճահճային դաղձի տերևներից (Herba Pulegii), կվասսիայի փայտից (Lignum Quassiae), օճառածառի կեղևից (Cortex Quillaja), տարկավանի խոտերից (Herba Tanaceti), սատապի խոտեր (Herba Rutae).սասաֆրասի ցողուններից, տերևներից, կեղևից (Stipes, Folium, Cortex Sassafratis).
դեղատու իշառվույտից (Millilotus offi cinalis).տոնկա հատիկներից (Semen Toncae).հոտավետ լիատրիսից (Liatris odoratissima).գետնաստղից (Asperulaodorata):

2. Հարցեր «Ծխախոտի անվտանգության տեխնիկական կանոնակարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի ապրիլի 28-ի N 540-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 5-ի N 219-Ն որոշմամբ հաստատված «Ծխախոտի անվտանգության տեխնիկական կանոնակարգ»-ով իրականացվող վերահսկողության վերաբերյալ:

Նշում՝ Աղյուսակ 2-ով սահմանված հարցերով վերահսկողության ենթակա են 2024 թվականի հունվարի 1-ից հետո արտադրված ծխախոտային արտադրանքները:

Աղյուսակ 2

NN ը/կ	**Հարցը**	**Հարցի համար հիմք հանդիսացող իրավական նորմը**	**Ստուգման անցկացման մեթոդը**	**Կշիռը**	**Մեկնաբանություն**	**Պատասխան**		
						Այո	**Ոչ**	**Չ/պ**
1	**2**	**3**	**4**	**5**	**6**	**7**	**8**	**9**
1.	Հայաստանի Հանրապետության տարածքում ծխախոտային արտադրանքը ուղեկցվում է համապատասխանության հայտարարագրով և (կամ) համապատասխանության ազգային նշանով	Կառավարության 2015 թվականի մարտի 5-ի N 219-Ն որոշմամբ հաստատված Ծխախոտի անվտանգության տեխնիկական կանոնակարգի (այսուհետև՝ Կանոնակարգ) 8-րդ կետ	փաստաթղթային	20				
2.	Արդյո՞ք ծխախոտահումքի և ծխախոտային արտադրանքում պահպանված են Աղյուսակով N 1.1 ներկայացված ֆիզիկամեխանիկական ցուցանիշները	Կանոնակարգի 10-րդ կետ	լաբորատոր փորձարկում, տեսազննում	2.0				
3.	Արդյո՞ք ծխախոտահումքի և ծխախոտային արտադրանքում ածխածնի օքսիդի առավելագույն	Կանոնակարգի 10.1-ին կետ	լաբորատոր փորձարկում, տեսազննում	2.0				

	պարունակությունը մեկ սիգարետի ծխում չի գերազանցում 10 մգ/սիգ							
4.	Արդյո՞ք տաքացվող ծխախոտի ծխախոտային գոլորշու գազային ֆազայում ածխածնի մոնոօքսիդի պարունակությանը ոչ ավելի է 100 սմ^3 0.3 մգ-ից	Կանոնակարգի 10.2-ին կետ	լաբորատոր փորձարկում, տեսազննում	2.0				
5.	Արդյո՞ք նիկոտինի զանգվածային մասը ծխախոտային խյուսում, նիկոտին պարունակող ոչ ծխախոտային խյուսում չի գերազանցում 3,5 % կամ 35 մգ/գ	Կանոնակարգի 10.3-ին կետ	լաբորատոր փորձարկում, տեսազննում	2.0				
6.	Արդյո՞ք ծխախոտային արտադրանքի արտադրության ժամանակ չեն օգտագործվում որպես բաղադրիչներ N 1.2 Աղյուսակում ներկայացված նյութերը	Կանոնակարգի 14-րդ կետ	լաբորատոր փորձարկում, տեսազննում	2.0				
7.	Ծխախոտային արտադրատեսակների սպառողների համար նախատեսված տեղեկությունը զետեղված է սպառողական փաթեթվածքի, իսկ դրանց թափանցիկ լինելու դեպքում՝ ներդիր թերթիկի վրա և պարունակում է	Կանոնակարգի 17-րդ կետ						
1)	ծխախոտային արտադրատեսակի տեսակի անվանումը («Սիգարետներ», «Ծխագլանակներ», «Սիգարներ», «Սիգարիլլաներ», «Ծխամորճի ծխախոտ», «Տաքացվող ծխախոտի գլանակ», «Տաքացվող կապսուլա ծխախոտով» կամ «Ծխելու ծխախոտ» և այլ)	Կանոնակարգի 17-րդ կետ, 1-ին ենթակետ	տեսազննում	0.5				
2)	ծխախոտային արտադրատեսակի անվանումը.	Կանոնակարգի 17-րդ կետ, 2-րդ ենթակետ	տեսազննում	0.5				
3)	Հայաստանի Հանրապետությունում գրանցված իրավաբանական անձի անվանումը, որն արտադրողի կողմից լիազորված է սպառողների բողոքներն ընդունելու, վերջինիս գտնվելու վայրը (երկիրը և հասցեն, ներառյալ փաստացի): Նման կազմակերպության բացակայության դեպքում նշվում	Կանոնակարգի 17-րդ կետ, 3-րդ ենթակետ	տեսազննում	0.5				

	է, որ սպառողների բողոքներ ընդունվում են Հայաստանի Հանրապետությունում գրանցված տվյալ ծխախոտային արտադրանքի արտադրողի կողմից: Նշված տեղեկությունը կարող է տեղադրվել սպառողական փաթեթվածքի արտաքին կամ ներքին կողմում՝ կարդալու համար հասանելի մասում							
4)	արտադրողի անվանումը, արտադրողի կողմից լիազորված անձի կամ ներմուծողի անվանումը, գտնվելու վայրը (երկիրը և հասցեն, այդ թվում՝ փաստացի) և (կամ) հսկող կազմակերպության անվանումը (առկայության դեպքում), վերջինիս գտնվելու վայրը (երկիրը և հասցեն, այդ թվում՝ փաստացի): Տեղեկության փոփոխության դեպքում արտադրողը, արտադրողի կողմից լիազորված անձը կամ ներմուծողը պարտավոր է այդ փոփոխությունների օրվանից 180 օրացուցային օրվա ընթացքում համապատասխան փոփոխություններ կատարել ծխախոտային արտադրանքի սպառողական փաթեթավորման (ներդիր թերթիկի) վրա փակցված տեղեկության մեջ: Արտադրողը, արտադրողի կողմից լիազորված անձը կամ ներմուծողը նշված ժամկետում իրավունք ունեն ծխախոտային արտադրանքը շրջանառության մեջ դնել չփոփոխված տեղեկություններով	Կանոնակարգի 17-րդ կետ, 4-րդ ենթակետ	տեսազննում	0.5				
5)	տեղեկություն ֆիլտրի առկայության մասին (ֆիլտրով ծխելու համար նախատեսված ծխախոտային արտադրատեսակի դեպքում).	Կանոնակարգի 17-րդ կետ, 5-րդ ենթակետ	տեսազննում	0.5				
6)	տեղեկություններ հատերի թվի (հատով ծխախոտային արտադրատեսակների դեպքում) կամ զտաքաշի (գ)	Կանոնակարգի 17-րդ կետ, 6-րդ ենթակետ	տեսազննում	0.5				

	(քաշով ծխախոտային արտադրատեսակների դեպքում) վերաբերյալ							
7)	Ծխախոտային արտադրատեսակների (բացառությամբ տաքացվող ծխախոտային արտադրանքի) օգտագործման վնասակարության մասին նախազգուշացում՝ ըստ սահմանված կարգի	Կանոնակարգի 17-րդ կետ, 7-րդ ենթակետ և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2016 թվականի մարտի 17-ի «Ծխախոտային արտադրատեսակների Օգտագործման վնասակարության մասին նախազգուշացումների էսքիզները և ծխախոտային արտադրանքի սպառողական փաթեթվածքի վրա դրանք զետեղելու պարամետրերը հաստատելու մասին» N 18 որոշում	տեսազննում	0.5				
8)	տաքացվող ծխախոտային արտադրանքի դեպքում՝ դրանց օգտագործման համար նախատեսված սարքի անվանումը	Կանոնակարգի 17-րդ կետ, 8-րդ ենթակետ	տեսազննում	0.5				
9)	տաքացվող ծխախոտային արտադրանքի օգտագործման վնասակարության մասին նախազգուշացում՝ գունավոր նկարների կամ ֆոտոպատկերների և տեքստի տեսքով՝ հետևյալ բովանդակությամբ. «Այս արտադրատեսակը պարունակում է նիկոտին, որը թունավոր է և ծանր կախվածություն է առաջացնում:»՝ համաձայն սույն տեխնիկական կանոնակարգի N 3 ձևի	Կանոնակարգի 17-րդ կետ, 9-րդ ենթակետ և Կանոնակարգի ձև 3	տեսազննում	0.5				
10)	տաքացվող ծխախոտային արտադրանքի դեպքում՝ նշում երեխաների համար անհասանելի վայրում	Կանոնակարգի 17-րդ կետ, 10-րդ ենթակետ	տեսազննում	0.5				

	պահելու անհրաժեշտության մասին՝ «Պահպանեք երեխաների համար անհասանելի տեղում» գրության տեսքով՝ համաձայն սահմանված ձևի, որը տպագրված է սպիտակ ֆոնի վրա, սև, թավ, հստակ, հեշտ ընթեռնելի տառաչափով և ՂԷԱ Գրապալատ (GHEA Grapalat) տառատեսակով	և Կանոնակարգի ձև 4						
11)	տեղեկություններ առավելագույն մանրածախ գնի վերաբերյալ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հուլիսի 6-ի N 817-Ն որոշմամբ սահմանված կարգին համապատասխան, ինչպես նաև տեղեկություններ ծխախոտային արտադրատեսակի արտադրման ամսի ու տարեթվի վերաբերյալ, որոնց վրա բացակայում է սպառողական փաթեթվածքի որևէ տարր (բացառությամբ փաթեթավորման թափանցիկ թաղանթի) կամ սոսնձված դրոշմանիշներ	Կանոնակարգի 17-րդ կետ, 11-րդ ենթակետ	տեսազննում	0.5				
8.	Սպառողական փաթեթվածքի (ներդիր թերթիկի) վրա զետեղված տեղեկությունը հավաստի է և սպառողներին չի գցում մոլորության մեջ	Կանոնակարգի 17.1-ին կետ	տեսազննում	0.5				
9.	Ծխախոտային արտադրանքի իրացման ժամանակ ծխախոտային արտադրանքի սպառողական փաթեթվածքի ներսում տեղադրված, արտաքին կողմից ամրացված կամ այդպիսի փաթեթվածքին կցված ներդիր թերթիկները չեն օգտագործվում՝ բացառությամբ այնպիսի սպառողական փաթեթվածքի, որի վրա հնարավոր չէ զետեղել սպառողի համար նախատեսված տեղեկությունը, ինչպես նաև սիգարների և սիգարիլլաների (սիգարիտաների) հատով իրացման ժամանակ	Կանոնակարգի 17.2-րդ կետ	տեսազննում	0.5				

10.	Սպառողական փաթեթվածքի (ներդիր թերթիկի) վրա զետեղված տեղեկությունը չի պարունակում՝	Կանոնակարգի 17.3-րդ կետ						
1)	որևէ տերմին, նկարագրություն, նշան, խորհրդանիշ կամ այլ նշում, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն ստեղծում են թյուր տպավորություն այն մասին, որ տվյալ ծխախոտային արտադրատեսակը պակաս վնասակար է, քան մյուս ծխախոտային արտադրատեսակները, այդ թվում՝ այնպիսի բառեր ու բառակապակցություններ, ինչպիսիք «խեժի ցածր պարունակությամբ», «թեթև», «շատ թեթև», «փափուկ», «էքստրա» «ուլտրա», բառերը, նշաններն ու խորհրդանիշներ, որոնց շնորհիվ ծխախոտային արտադրատեսակն ասոցացվում է սննդամթերքի (սննդային հավելման) հետ կամ, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն ստեղծում են թյուր տպավորություն այն մասին, որ ծխախոտային արտադրատեսակն ունի սննդամթերքի (սննդային հավելման) համ, այդպիսի բառերի նույնարմատ բառերը, այդպիսի բառերի օտարալեզու անալոգները, ինչպես նաև այնպիսի բառերի անալոգներ, որոնք օտար լեզուներից տառադարձվում են հայերենով.	Կանոնակարգի 17.3-րդ կետ, 1-ին ենթակետ	տեսազննում	0.7				
2)	սննդամթերքի, դեղամիջոցների, դեղաբույսերի պատկերներ, ինչպես նաև բառեր կամ բառակապակցություններ, որոնց շնորհիվ ծխախոտային արտադրատեսակն ուղղակիորեն կամ անուղղակիորեն ասոցացվում է սննդամթերքի, դեղամիջոցի կամ դեղաբույսի հետ	Կանոնակարգի 17.3-րդ կետ, 2-րդ ենթակետ	տեսազննում	0.7				
11.	Սպառողական փաթեթվածքի (ներդիր թերթիկի) վրա զետեղված չեն ծխախոտային արտադրատեսակների ծխի մեջ խեժի, նիկոտինի ու ածխածնի մենօքսիդի	Կանոնակարգի 17.4-րդ կետ						

	պարունակության վերաբերյալ քանակական ցուցանիշներ, ինչպես նաև տեղեկություն, որը պարունակում է պնդումներ այն մասին, որ՝							
1)	տվյալ ծխախոտային արտադրատեսակի (ծխախոտային արտադրատեսակի տեսակի) օգտագործումը նվազեցնում է ծխախոտային արտադրատեսակների օգտագործման հետ կապված հիվանդությունների առաջացման վտանգը	Կանոնակարգի 17.4-րդ կետ, 1-ին ենթակետ	տեսազննում	1.0				
2)	տվյալ ծխախոտային արտադրատեսակը (ծխախոտային արտադրատեսակի տեսակը) պակաս վտանգավոր է առողջության համար, քան մյուս ծխախոտային արտադրատեսակները (ծխախոտային արտադրատեսակների մյուս տեսակները)	Կանոնակարգի 17.4-րդ կետ, 2-րդ ենթակետ	տեսազննում	1.0				
3)	տվյալ ծխախոտային արտադրատեսակի (ծխախոտային արտադրատեսակի տեսակի) օգտագործման հետ կապված հիվանդությունների առաջացման վտանգը նվազեցված է ծխախոտային արտադրատեսակի օգտագործման ժամանակ առաջացող նյութի առկայության (բացակայության, ցածր պարունակության) շնորհիվ	Կանոնակարգի 17.4-րդ կետ, 3-րդ ենթակետ	տեսազննում	1.0				
12.	Սպառողական փաթեթվածքի (ներդիր թերթիկի) վրա զետեղված տեղեկությունը զետեղված է հստակ, հասկանալի, դյուրընթեռնելի, չմաքրվող, կլիմայական գործոնների ազդեցության նկատմամբ կայուն տառերով կամ պայմանանշաններով: Ընդ որում, սպառողական փաթեթվածքի (ներդիր թերթիկի) վրա տեղեկություն զետեղելու միջոցներն ու եղանակները այնպիսին են, որ ապահովվում են այդ տեղեկության պահպանվածությունը ծխախոտային արտադրանքի տեղափոխման, պահպանման և իրացման ժամանակ	Կանոնակարգի 17.5-րդ կետ	տեսազննում	0.7				

13.	Սպառողական փաթեթվածքի վրա զետեղվող տեղեկությունը, բացառությամբ ծխախոտային արտադրանքի անվանման, տեղադրված է այնպես, որ սպառողական փաթեթվածքը բացելիս մակագրությունների ամբողջականությունը չի խախտվում	Կանոնակարգի 17.6-րդ կետ	տեսազննում	0.7				
14.	Սպառողական փաթեթվածքի վրա զետեղվող տեղեկությունը տպագրված չէ փաթեթավորման թափանցիկ թաղանթի կամ արտաքին փաթեթավորման որևէ այլ նյութի վրա, ծածկված չթ տպագրված այլ տեղեկությամբ և մասամբ կարող է ծածկված լինել դրոշմանիշներով՝ բացառությամբ սպառողական փաթեթվածքի դիմային կողմի	Կանոնակարգի 17.7-րդ կետ	տեսազննում	0.7				
15.	Լեզվի վերաբերյալ պահանջները պահպանված են	Կանոնակարգի 17.8-րդ կետ	տեսազննում	0.7				
16.	Ծխախոտային արտադրանքի յուրաքանչյուր սպառողական փաթեթվածքի (ներդիր թերթիկի) վրա ծխախոտային արտադրատեսակների օգտագործման վնասակարության մասին նախազգուշացում է զետեղված	Կանոնակարգի 18-րդ կետ	տեսազննում	0.7				
17.	Արդյո՞ք ծխախոտային արտադրատեսակների օգտագործման վնասակարության մասին նախազգուշացումը՝	Կանոնակարգի 19-րդ կետ						
1)	տեղադրված է ծխախոտային Արտադրատեսակի սպառողական փաթեթվածքի դիմային ու հակառակ հիմնական կողմերի վերին հատվածներում: Ծխախոտային արտադրատեսակի սպառողական փաթեթվածքի հակառակ հիմնական կողմի վրա ծխախոտային արտադրատեսակների օգտագործման վնասակարության մասին նախազգուշացումը,	Կանոնակարգի 19-րդ կետ, 1-ին ենթակետ	տեսազննում	0.7				

	դրոշմանիշով ծածկվելու կամ սպառողական փաթեթվածքը սովորական ձևով բացելիս վնասվելու դեպքում, տեղադրված է ստորին հատվածում							
2)	զբաղեցնում է այդ կողմերի մակերեսի առնվազն 50 տոկոսը	Կանոնակարգի 19-րդ կետ, 2-րդ ենթակետ	տեսազննում	0.7				
18.	Ծխախոտային արտադրատեսակի սպառողական փաթեթվածքի դիմային հիմնական կողմի վրա ծխախոտային արտադրատեսակների օգտագործման վնասակարության մասին նախազգուշացման տեքստը զետեղված է հայերենով	Կանոնակարգի 19.1-ին կետ	տեսազննում	0.7				
19.	Ծխախոտային արտադրատեսակների օգտագործման վնասակարության մասին նախազգուշացումները զետեղված են ծխախոտային արտադրանքի՝ հավասար քանակությամբ սպառողական փաթեթվածքների վրա	Կանոնակարգի 19.2-րդ կետ	տեսազննում	0.7				
20.	Ծխախոտային արտադրատեսակների օգտագործման վնասակարության մասին նախազգուշացումների էսքիզների սույն տեխնիկական կանոնակարգի N 3 ձևին համապատասխան տարալուծումը կազմում է առնվազն 300 ԴիՓիԱյ (300 dpi)	Կանոնակարգի 21-րդ կետ	տեսազննում	0.7				
21.	Նախազգուշացման չափերն այնպես են ընտրվել, որ նախազգուշացման մակերեսը կազմի սպառողական փաթեթվածքի յուրաքանչյուր հիմնական կողմի առնվազն 50 տոկոսը և նախազգուշացման գունավոր նկարը կամ լուսապատկերը և տեքստը զբաղեցնում է դրանց համար նախատեսված մակերեսի հնարավոր առավելագույն մասը: Ընդ որում, թույլատրվում է զետեղվող գունավոր նկարի կամ լուսապատկերի և տեքստի համաչափության 20 տոկոսից ոչ ավելի փոփոխություն՝ հաստատված նախազգուշացումների	Կանոնակարգի 22-րդ կետ	տեսազննում	0.7				

	էսքիզների համաչափության նկատմամբ, բացառությամբ, այն դեպքի, երբ սպառողական փաթեթվածքի հիմնական կողմերի դիմերեսի կամ դարձերեսի՝ լայնության նկատմամբ բարձրության հարաբերակցությունը 1,92- ից ավելին է: Նախազգուշացման գունավոր նկարը կամ լուսապատկերը և տեքստը տեղադրված են Պանտոն 448 Սի (Pantone 448C) գույնին համապատասխան գույնով ծածկված մակերեսի վրա							
22.	Նախազգուշացման գունավոր նկարը կամ լուսապատկերը և տեքստը հավասարաչափ բաշխված են ամբողջ մակերեսով, որտեղ այն տեղադրված է, տեքստը զետեղված է սպիտակ գույնի մեծատառերով, թավ, հստակ, ՂԷԱ Գրապալատ (GHEA Grapalat) տառատեսակով, որի չափը մեծացված է այնքան, որ ամենաերկար տողը հասնի զետեղման հատվածի եզրին, եթե դա հնարավոր է: Միջտողային տարածությունը չի գերազանցում տառատեսակի բարձրությունը	Կանոնակարգի 23-րդ կետ	տեսազննում	0.7				
23.	Այն դեպքում, երբ սպառողական փաթեթվածքը սովորական ձևով բացելիս խախտվում է նախազգուշացման տեքստի ամբողջականությունը, ապա տեքստը (պատռվող բառը) տեղափոխված է պատռման գծի ստորին հատված՝ հորիզոնական նախազգուշացման կենտրոնի ուղղության հետ հավասարեցմամբ: Սպառողական փաթեթվածքի դարձերեսի հիմնական կողմում զետեղված նախազգուշացումը կարող է մասնակիորեն փակվել դրոշմանիշով	Կանոնակարգի 23.1-ին կետ	տեսազննում	0.7				

Աղյուսակ N 1.1

ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՖԻԶԻԿԱՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Ծխախոտային արտադրատեսակը	Ցուցանիշի անվանումը	Նորմը
Սիգարետ	Խոնավությունը, %	11 - 15
	Նիկոտինի առավելագույն պարունակությունը մեկ սիգարետի (ֆիլտրով և առանց ֆիլտրի) ծխում չպետք է գերազանցի, մգ/սիգ,	1
	Խեժի առավելագույն պարունակությունը մեկ սիգարետի (ֆիլտրով և առանց ֆիլտրի) ծխում չպետք է գերազանցի, մգ/սիգ	10
Սիգար, սիգարիլլա	Խոնավությունը, %	10 - 14
Ծխագլանակ		11 - 15
Ծխելու ծխախոտ		12 - 16
Ծխամորճի ծխախոտ		11,5 - 15,5
Տաքացվող ծխախոտ (հումքի համար)	խոնավություն (%)	7-ից ոչ պակաս
	գլիցերին թորած (%)	95-ից ոչ պակաս մաքրությամբ
	պրոպիլենգլիկոլ (%)	95-ից ոչ պակաս մաքրո

Աղյուսակ N 1.2

NN ը/կ	Արգելվող նյութերը

1.	ագարինաթթու (Acidumagaricinicum). կեչու ձյութայուղ (Oleum Betulaeempyreumaticum). դառը նուշի յուղ (Oleum Amygdalarumamarum)՝ ազատ կամ կապված սինիլաթթվի պարունակությամբ սասաֆրասի յուղ (Oleum Sassafratis). գիհու ձյութայուղ (Oleum Juniperi Empyreumaticum). կամֆորայի յուղ (Oleum Camphoratum). կամֆորա կումարին կանճրակ կենսածառ՝ թույա
2.	Այն նյութերը, որոնց շրջանառությունն արգելված է՝ Եվրասիական տնտեսական միության և Միասնական տնտեսական տարածքի անդամ պետությունների միջազգային պայմանագրերին համապատասխան:
3.	Բուրավետիչ և համային նյութեր՝ պատրաստված. դառը և քաղցր համով մորմի փայտե ցողունից (Stipites Dulcamarae) կամֆորայի ծառի փայտից (Lignum Camphorae) բազմոտիկ սովորական կոճղարմատից (Rhizoma Poiypodii) ճահճային դաղձի տերևներից (Herba Pulegii), կվասսիայի փայտից (Lignum Quassiae), օճառածառի կեղևից (Cortex Quillaja) տարկավանի խոտերից (Herba Tanaceti) սատապի խոտեր (Herba Rutae) սասաֆրասի ցողուններից, տերևներից կեղևից (Stipes, Folium, Cortex Sassafratis) դեղատու իշառվույտից (Millilotus officinalis) տոնկա հատիկներից (Semen Toncae) հոտավետ լիատրիսից (Liatris odoratissima) գետնաստղից (Asperulaodorata)

3. Հարցեր «Ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների անվտանգության տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 10-ի N 155-Ն որոշմամբ հաստատված «Ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների անվտանգության տեխնիկական կանոնակարգ»-ով իրականացվող վերահսկողության վերաբերյալ:

Աղյուսակ 3

NN ը/կ	**Հարցը**	**Հարցի համար հիմք հանդիսացող իրավական նորմը**	**Ստուգման անցկացման մեթոդը**	**Կշիռը**	**Մեկնա-բանու-թյուն**	**Պատասխան**		
						Այո	**Ոչ**	**Չ/պ**
1	**2**	**3**	**4**	**5**	**6**	**7**	**8**	**9**
1.	Արդյո՞ք ՀՀ տարածքում շրջանառության մեջ դրվող նիկոտին պարունակող արտադրանքը (այսուհետև՝ ՆՊԱ) ուղեկցվում է համապատասխանության հայտարարագրով	Կառավարության 2022 թվականի փետրվարի 10-ի N 155-Ն որոշմամբ հաստատված Ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների անվտանգության տեխնիկական կանոնակարգի (այսուհետև՝ Կանոնակարգ) 8-րդ կետ	փաստաթղթային	20				
2.	Արդյո՞ք ՆՊԱ-ն ուղեկցվում են հայերեն մակնշմամբ և համապատասխանության ազգային նշանով	Կանոնակարգի 8-րդ կետ	տեսազննում	1.0				
3.	Արդյո՞ք նիկոտին մատակարարող համակարգի (այսուհետև՝ ՆՄՀ) հեղուկների արտադրման գործընթացում օգտագործվում են հետևյալ հումքերը. նիկոտին, նիկոտինի աղեր, գլիցերին՝ թորած, պրոպիլենգլիկոլ	Կանոնակարգի 20-րդ կետ (Աղյուսակ 1)	լաբորատոր փորձարկում, տեսազննում	1.8				

4.	Արդյո՞ք նիկոտին պարունակող հեղուկը չի պարունակում հետևյալ հավելումները.	Կանոնակարգի 22-րդ կետ						
1)	վիտամիններ կամ այլ հավելումներ, որոնք տպավորություն են ստեղծում, որ ծխախոտային արտադրատեսակի փոխարինիչն առողջության համար օգտակար է կամ ներկայացնում է առողջության համար նվազեցված ռիսկեր.	Կանոնակարգի 22-րդ կետ, 1-ին ենթակետ	լաբորատոր փորձարկում, տեսազննում	1.7				
2)	կոֆեին կամ տաուրին կամ այլ հավելումներ և խթանիչ միացություններ, որոնք կապված են էներգիայի և կենսունակության հետ	Կանոնակարգի 22-րդ կետ, 2-րդ ենթակետ	լաբորատոր փորձարկում, տեսազննում	1.8				
3)	Արտանետումների գունազարդման հատկություններ ունեցող հավելումներ.	Կանոնակարգի 22-րդ կետ, 3-րդ ենթակետ	լաբորատոր փորձարկում, տեսազննում	1.8				
4)	հավելումներ, որոնք հեշտացնում են ինհալացիան կամ նիկոտինի կլանումը.	Կանոնակարգի 22-րդ կետ, 4-րդ ենթակետ	լաբորատոր փորձարկում, տեսազննում	1.8				
5)	հավելումներ, որոնք ունեն քաղցկեղածին, մուտագեն կամ ռեպրոտոքսիկ (մարդու վերարտադրողական համակարգի վրա ազդող թունավոր նյութեր) հատկություններ չտաքացված վիճակում	Կանոնակարգի 22-րդ կետ, 5-րդ ենթակետ	լաբորատոր փորձարկում, տեսազննում	1.8				
5.	Արդյո՞ք ՆՄՀ-ի հեղուկում նիկոտինի առավելագույն պարունակությունը չի գերազանցում 20 մգ/սմ3-ը	Կանոնակարգի 23-րդ կետ	լաբորատոր փորձարկում, տեսազննում	1.8				
6.	Արդյո՞ք սպառման համար նախատեսվող՝ միավոր պարկուճում (քարթրիջում) ՆՄՀ-ի հեղուկի ծավալը չի գերազանցում 2 մլ-ը:	Կանոնակարգի 24-րդ կետ	լաբորատոր փորձարկում, տեսազննում	1.8				
7.	Արդյո՞ք ՆՊԱ-ի արտադրության ժամանակ առկա չեն արգելված բաղադրիչներ. նյութեր՝ ագարինաթթու	Կանոնակարգի 34-րդ կետ	լաբորատոր փորձարկում, տեսազննում	1.8				

	(Acidumagaricinicum), կեչու ձյութայուղ (Oleum Betulaeempyreumaticum), դառը նուշի յուղ (Oleum Amygdalarumamarum)՝ ազատ կամ կապվածսինիլաթթվի պարունակությամբ, սասաֆրասի յուղ (Oleum Sassafratis), գիհու ձյութայուղ (Oleum Juniperi Empyreumaticum), կամֆորայի յուղ (Oleum Camphoratum), կամֆորա, կումարին, կանճրակ, կենսաձառ՝ թույա, սաֆլոր, թուխոն, նյութերը, որոնց շրջանառությունն արգելված է՝ ՀՀ միջազգային պայմանագրերով, բուրավետիչ և համային նյութեր, որոնք պատրաստված են՝ դառը և քաղցր համով մորմի փայտե ցողունից (Stipites Dulcamarae), կամֆորայի ծառի փայտից (Lignum Camphorae), բազ-մոտիկ սովորական կոճղարմատից (Rhizoma Poiypodii), ճահճային դաղձի տերևներից (Herba Pulegii), կվասսիայի փայտից (Lignum Quassiae), օճառաձառի կեղևից (Cortex Quillaja), տարկավանի խոտերից (Herba Tanaceti), սատապի խոտերից (Herba Rutae), սասաֆրասի ցողուններից, տերևներից, կեղևից (Stipes, Folium, Cortex Sassafratis), դեղատու իշառվույտից (Millilotus offi cinalis), տոնկա հատիկներից (Semen Toncae), հոտավետ լիատրիսից (Liatris odoratissima), գետնաստղից (Asperulaodorata)							
8.	ՆՊԱ-ի սպառողների համար նախատեսված տեղեկությունը զետեղված է ՆՊԱ-ի սպառողական փաթեթվածքի, իսկ դրանց	Կանոնակարգի 36.1-ին կետ	տեսազննում	0.2				

	թափանցիկ լինելու դեպքում՝ ներդիր թերթիկի վրա							
9.	ՆՊԱ-ի սպառողների համար նախատեսված ՆՊԱ-ի սպառողական փաթեթվածքի թափանցիկ լինելու դեպքում՝ ներդիր թերթիկի վրա զետեղված տեղեկությունը պարունակում է	Կանոնակարգի 36.1-ին կետ						
1)	արտադրանքի անվանումը, այդ թվում՝ ապրանքային նշանը	Կանոնակարգի 36.1-ին կետ, 1-ին ենթակետ	տեսազննում	0.1				
2)	արտադրանքի արտադրման ամիսը, տարին և պիտանիության ժամկետը	Կանոնակարգի 36.1-ին կետ, 2-րդ ենթակետ	տեսազննում	0.2				
3)	Հայաստանի Հանրապետությունում գրանցված իրավաբանական անձի անվանումը, որը արտադրողի կողմից լիազորված է սպառողների բողոքներն ընդունելու, վերջինիս գտնվելու վայրը (երկիրը և հասցեն՝ ներառյալ փաստացի): Նման կազմակերպության բացակայության դեպքում նշված է, որ սպառողների բողոքներ ընդունվում են Հայաստանի Հանրապետությունում գրանցված տվյալ ծխախոտային արտադրանքի արտադրողի կողմից: Նշված տեղեկությունը տեղադրված է սպառողական փաթեթվածքի արտաքին կամ ներքին կողմում՝ կարդալու համար հասանելի մասում	Կանոնակարգի 36.1-ին կետ, 3-րդ ենթակետ	տեսազննում	0.2				
4)	արտադրողի անվանումը, արտադրողի կողմից լիազորված անձի կամ ներմուծողի անվանումը, գտնվելու վայրը (երկիրը և հասցեն, այդ թվում՝ փաստացի) և (կամ) վերահսկող կազմակերպության անվանումը (առկայության դեպքում), վերջինիս գտնվելու վայրը (երկիրը և հասցեն, այդ թվում՝ փաստացի): Տեղեկության	Կանոնակարգի 36.1-ին կետ, 4-րդ ենթակետ	տեսազննում	0.2				

	փոփոխության դեպքում արտադրողը, արտադրողի կողմից լիազորված անձը կամ ներմուծողը պարտավոր է այդ փոփոխությունների օրվանից 180 օրացուցային օրվա ընթացքում համապատասխան փոփոխություններ կատարել ծխախոտային արտադրանքի սպառողական փաթեթավորման (ներդիր թերթիկի) վրա փակցված տեղեկության մեջ: Արտադրողը, արտադրողի կողմից լիազորված անձը կամ ներմուծողը նշված ժամկետում իրավունք ունի ծխախոտային արտադրանքը շրջանառության մեջ դնելու չփոփոխված տեղեկություններով.							
5)	նշում երեխաների համար անհասանելի վայրում պահելու անհրաժեշտության մասին՝ «Պահպանեք երեխաների համար անհասանելի տեղում» գրության տեսքով՝ համաձայն հաստատված ձևի: Ընդ որում՝ նշման տեքստը տպագրված է սպիտակ ֆոնի վրա՝ սև, թավ, հստակ, հեշտ ընթեռնելի տառաչափով և ՂԷԱ Գրապալատ (GHEA Grapalat) տառատեսակով.	Կանոնակարգի 36.1-ին կետ, 5-րդ ենթակետ	տեսազննում	0.8				
6)	նախազգուշացում՝ գունավոր նկարի կամ ֆոտոպատկերի և տեքստի տեսքով՝ հետևյալ բովանդակությամբ. «Այս արտադրատեսակը պարունակում է նիկոտին, որը թունավոր է և ծանր կախվածություն է առաջացնում:»՝ համաձայն սահմանված ձևի: Նախազգուշացման գունավոր նկարը կամ լուսապատկերը և տեքստը հավասարաչափ բաշխված են ամբողջ մակերեսով, որտեղ այն տեղադրված է, տեքստը զետեղված է սպիտակ գույնի մեծատառերով,	Կանոնակարգի 36.1-ին կետ, 6-րդ ենթակետ և Կանոնակարգի ձև 2	տեսազննում	0.5				

	թավ, հստակ, ՂԷԱ Գրապալատ (GHEA Grapalat) տառատեսակով, որի չափը մեծացված է այնքան, որ ամենաերկար տողը հասնի զետեղման հատվածի եզրին, եթե դա հնարավոր է: Միջտողային տարածությունը չի գերազանցում տառատեսակի բարձրությունը							
10.	ՆՊԱ-ի սպառողական փաթեթվածքի (ներդիր թերթիկի) վրա զետեղված տեղեկությունը հավաստի է և չի գցում սպառողներին մոլորության մեջ	Կանոնակարգի 36.2-րդ կետ	լաբորատոր փորձարկում, տեսազննում	1.0				
11.	ՆՊԱ-ի սպառողական փաթեթվածքի (ներդիր թերթիկի) վրա զետեղված տեղեկությունը չի պարունակում սննդամթերքի, դեղամիջոցների, դեղաբույսերի պատկերներ, ինչպես նաև բառեր կամ բառակապակցություններ, որոնց շնորհիվ ծխախոտային արտադրատեսակն ուղղակիորեն կամ անուղղակիորեն ասոցացվում է սննդամթերքի, դեղամիջոցի կամ դեղաբույսի հետ	Կանոնակարգի 36.3-րդ կետ	տեսազննում	0.4				

12.	ՆՊԱ-ի սպառողական փաթեթվածքի (ներդիր թերթիկի) վրա զետեղված տեղեկությունը զետեղված է հստակ, հասկանալի, դյուրընթեռնելի, չմաքրվող, կլիմայական գործոնների ազդեցության նկատմամբ կայուն տառերով կամ պայմանանշաններով: Ընդ որում՝ ՆՊԱ-ի սպառողական փաթեթվածքի (ներդիր թերթիկի) վրա տեղեկություն զետեղելու միջոցներն ու եղանակները այնպիսին են, որ ապահովվում են այդ տեղեկության պահպանվածությունը ՆՊԱ-ի տեղափոխման, պահպանման և իրացման ժամանակ	Կանոնակարգի 36.4-րդ կետ	տեսազննում	0.3				
13.	ՆՊԱ-ի սպառողական փաթեթվածքի վրա բացակայում են մոլորության մեջ գցող տերմինների՝ «Նիկոտինի ցածր պարունակություն», «Թեթև», «Շատ թեթև» («Գերթեթև»), «Փափուկ», «Յուրահատուկ», «Նվազ վտանգավոր» կամ ցանկացած այլ տերմինների օգտագործումը, որոնք ուղղակի կամ անուղղակի կերպով նպաստում են տվյալ արտադրատեսակի անվտանգ լինելու մասին կարծիքի ձևավորմանը	Կանոնակարգի 36.5-րդ կետ	տեսազննում	0.4				
14.	ՆՊԱ-ի սպառողական փաթեթվածքի վրա զետեղված չեն այն սարքերի անվանումը, ապրանքային նշանը կամ այլ տեղեկություններ, որոնք չեն օգտագործվել ՆՄՀ-ի գնահատման համար՝ սահմանված պահանջներին համապատասխան	Կանոնակարգի 36.6-րդ կետ	տեսազննում	0.2				

15.	ՆՊԱ-ի սպառողական փաթեթվածքի վրա զետեղվող տեղեկությունը տպագրված չէ փաթեթավորման թափանցիկ թաղանթի կամ արտաքին փաթեթավորման որևէ այլ նյութի վրա, ծածկված չէ տպագրված այլ տեղեկությամբ և մասամբ ծածկված է դրոշմանիշներով՝ բացառությամբ սպառողական փաթեթվածքի դիմային կողմ(եր)ի	Կանոնակարգի 36.7-րդ կետ	տեսազննում	0.3				
16.	ՆՊԱ-ի սպառողական փաթեթվածքի վրա զետեղվող տեղեկությունը, բացառությամբ ՆՊԱ-ի անվանման, տեղադրված է այնպես, որ սպառողական փաթեթվածքը բացելիս մակագրությունների ամբողջականությունը չի խախտվում	Կանոնակարգի 36.8-րդ կետ	տեսազննում	0.3				
17.	ՆՊԱ-ի սպառողական փաթեթվածքի վրա զետեղվող տեղեկությունը չի տպագրվել փաթեթավորման թափանցիկ թաղանթի կամ արտաքին փաթեթավորման որևէ այլ նյութի վրա, ծածկված է տպագրված այլ տեղեկությամբ և մասամբ ծածկված է դրոշմանիշներով՝ բացառությամբ սպառողական փաթեթվածքի դիմային կողմի	Կանոնակարգի 36.9-րդ կետ	տեսազննում	0.3				
18.	Լեզվի վերաբերյալ պահանջները պահպանված են	Կանոնակարգի 36.10-րդ կետ	տեսազննում	0.2				
19.	Նախազգուշացումը զետեղված է ՆՊԱ-ի յուրաքանչյուր սպառողական փաթեթվածքի (ներդիր թերթիկի) վրա	Կանոնակարգի 36.11-րդ կետ	տեսազննում	0.4				
20.	Նախազգուշացումը տեղադրված է ՆՊԱ-ի սպառողական փաթեթվածքի դիմային ու	Կանոնակարգի 36.11-րդ կետ	տեսազննում	0.8				

	հակառակ հիմնական կողմերի վերին հատվածներում, հայերեն: Նախազգուշացման տարալուծումը կազմում է առնվազն 300 ԴիՓիԱյ (300 dpi): Նախազգուշացման գունավոր նկարը կամ լուսապատկերը և տեքստը տեղադրված են Պանտոն 448 Սի (Pantone 448C) գույնին համապատասխան գույնով ծածկված մակերեսի վրա: Նախազգուշացման չափերն այնպես են ընտրվել, որ նախազգուշացման մակերեսը կազմի սպառողական փաթեթվածքի յուրաքանչյուր հիմնական կողմի առնվազն 50 տոկոսը և նախազգուշացման գունավոր նկարը կամ լուսապատկերը և տեքստը զբաղեցնում են դրանց համար նախատեսված մակերեսի հնարավոր առավելագույն մասը:							
21.	ՆՊԱ-ի սպառողական փաթեթվածքի հակառակ հիմնական կողմի վրա նախազգուշացումը դրոշմանիշով ծածկվելու կամ սպառողական փաթեթվածքը սովորական ձևով բացելիս վնասվելու դեպքում տեղադրված է ստորին հատվածում	Կանոնակարգի 36.12-րդ կետ	տեսազննում	0.4				
22.	ՆՊԱ-ի սպառողական փաթեթվածքի վրա զետեղված նախազգուշացումը զբաղեցնում է 4 հավասար կողմ ունեցող սպառողական փաթեթվածքի առնվազն 2 կողմերից յուրաքանչյուրի 50 տոկոսից ոչ պակաս մակերեսը, կամ սպառողական փաթեթվածքի երկու առավել մեծ կողմերից յուրաքանչյուրի մակերևույթի 50 տոկոսից ոչ պակաս մակերեսը	Կանոնակարգի 36.13-րդ կետ	տեսազննում	0.4				

23.	Նախազգուշացմամբ չզբաղեցված, սակայն նախազգուշացման համար հատկացված մակերեսը տեղադրված է նախազգուշացումից ներքև և ամբողջությամբ ծածկված է Պանտոն 448 Սի (Pantone 448C) գույնին համապատասխան գույնով՝ սպառողական փաթեթվածքի հիմնական կողմի լայնությամբ: Նախազգուշացմամբ զբաղեցված մակերեսը և Պանտոն 448 Սի (Pantone 448C) գույնին համապատասխան գույնով ծածկված մակերեսն իրար հետ միասին կազմում են սպառողական փաթեթվածքի յուրաքանչյուր հիմնական կողմի մակերեսի առնվազն 50 տոկոսը	Կանոնակարգի 36.14-րդ կետ	տեսազննում	0.4				
24.	Արդյո՞ք ՆՄՀ-ի լիցքավորման համար օգտագործվող տարողության ծավալը չի գերազանցում 10 մլ-ը	Կանոնակարգի 38-րդ կետ	տեսազննում	0.5				
25.	Միավոր փաթեթավորումը և արդյունաբերական եղանակով հեղուկով լցված ՆՄՀ-ն չունի հեղուկի արտահոսք	Կանոնակարգի 40-րդ կետ	փորձարկում, տեսազննում	1.4				
26.	Արդյո՞ք ՆՄՀ-ի համար նախատեսված հեղուկների փաթեթվածքի վրա մակնշված է հետևյալ տեղեկատվությունը	Կանոնակարգի 51-րդ կետ						
1)	ՆՊԱ-ի կամ լցանյութի տեսակը	Կանոնակարգի 51-րդ կետ, 1-ին ենթակետ	տեսազննում	0.1				
2)	արտադրանքի անվանումը, այդ թվում՝ ապրանքային նշանը	Կանոնակարգի 51-րդ կետ, 2-րդ ենթակետ	տեսազննում	0.1				
3)	կտորների քանակը (չափաբաժին կամ միավոր (հատ)	Կանոնակարգի 51-րդ կետ, 3-րդ ենթակետ	տեսազննում	0.1				

4)	արտադրողի և ներկրողի անվանումը, վերջիններիս գտնվելու վայրը (իրավաբանական հասցեն)	Կանոնակարգի 51-րդ կետ, 4-րդ ենթակետ	տեսազննում	0.1				
5)	ՀՀ-ում գրանցված և սպառողների պահանջներն ընդունելու համար արտադրողի կողմից լիազորված կազմակերպության անվանումը և հասցեն	Կանոնակարգի 51-րդ կետ, 5-րդ ենթակետ	տեսազննում	0.1				
6)	ՆՄՀ-ի համար հեղուկում նիկոտինի պարունակությունը(մգ/սմ3)	Կանոնակարգի 51-րդ կետ, 6-րդ ենթակետ	տեսազննում	0.1				
7)	ՆՄՀ-ի համար հեղուկի ծավալը (մլ)	Կանոնակարգի 51-րդ կետ, 7-րդ ենթակետ	տեսազննում	0.1				
8)	արտադրման ամիսը, տարին և պիտանիության ժամկետը	Կանոնակարգի 51-րդ կետ, 8-րդ ենթակետ	տեսազննում	0.1				
9)	անչափահասներին վաճառքի անթույլատրելիության մասին նշում	Կանոնակարգի 51-րդ կետ, 9-րդ ենթակետ	տեսազննում	0.1				
10)	ՆՄՀ-ի հեղուկների համար՝ նշում երեխաների համար անհասանելի վայրում պահելու անհրաժեշտության մասին՝ «Պահպանեք երեխաների համար անհասանելի տեղում» գրության տեսքով	Կանոնակարգի 51-րդ կետ, 10-րդ ենթակետ և Կանոնակարգի ձև 1	տեսազննում	0.1				
11)	սարքի համար դրա անվանումը՝ ներառելով ՆՄՀ-ի կամ պարկուճի (քարթրիջի) հետ նպատակային օգտագործման և կիրառման ցուցումը.	Կանոնակարգի 51-րդ կետ, 11-րդ ենթակետ	տեսազննում	0.1				
12)	նախազգուշացում՝ «Այս արտադրատեսակը պարունակում է նիկոտին, որը թունավոր է և ծանր կախվածություն է առաջացնում:»: Նախազգուշացման տեքստը զետեղվում է սպիտակ գույնի մեծատառերով, թավ, հստակ, ՂԷԱ Գրապալատ (GHEA Grapalat) տառատեսակով, որի չափը պետք է մեծացվի	Կանոնակարգի 51-րդ կետ, 12-րդ ենթակետ	տեսազննում	0.1				

	այնքան, որ ամենաերկար տողը հասնի զետեղման հատվածի եզրին, եթե դա հնարավոր է: Միջտողային տարածությունը չպետք է գերազանցի տառատեսակի բարձրությունը							
13)	արտադրանքի օգտագործման և պահպանման հրահանգները	Կանոնակարգի 51-րդ կետ, 13-րդ ենթակետ	տեսազննում	0.1				
14)	հակացուցումները	Կանոնակարգի 51-րդ կետ, 14-րդ ենթակետ	տեսազննում	0.1				
15)	Նախազգուշացումներ հատուկ ռիսկային խմբերի համար	Կանոնակարգի 51-րդ կետ, 15-րդ ենթակետ	տեսազննում	0.1				
16)	հնարավոր անբարենպաստ ազդեցությունները	Կանոնակարգի 51-րդ կետ, 16-րդ ենթակետ	տեսազննում	0.1				
27.	Եթե ՆՄՀ-ն կառուցվածքով միացված է ՆՊԱ-ի հետ, ապա ՆՄՀ-ի սպառողական փաթեթվածքի վրա զետեղված է պահանջված տեղեկությունը	Կանոնակարգի 51.1-ին կետ	տեսազննում	0.4				
28.	Արդյո՞ք օգտագործված չեն «Նիկոտինի ցածր պարունակություն», «Թեթև», «Շատ թեթև» («Գերթեթև»), «Փափուկ», «Յուրահատուկ», «Նվազ վտանգավոր» կամ ցանկացած այլ՝ մոլորության մեջ գցող տերմիններ, որոնք ուղղակի կամ անուղղակի կերպով նպաստում են տվյալ արտադրատեսակի անվտանգ լինելու մասին կարծիքի ձևավորմանը	Կանոնակարգի 55-րդ կետ	տեսազննում	1.0				

3. ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1	«Այո» - այո, առկա է, համապատասխանում է, բավարարում է	v		

2	«Ոչ» - ոչ, առկա չէ, չի համապատասխանում, չի բավարարում		v	
3	«Չ/պ» - չի պահանջվում, չի վերաբերում			v

4. ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ

Տվյալ ստուգաթերթը կազմվել է հետևյալ նորմատիվ փաստաթղթերի հիման վրա՝

1) Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 12-ի 107-Ն որոշմամբ հաստատված ՄՄ ՏԿ 035/2014 տեխնիկական կանոնակարգ,
2) Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2016 թվականի մարտի 17-ի «Ծխախոտային արտադրատեսակների օգտագործման վնասակարության մասին նախազգուշացումների էսքիզները և ծխախոտային արտադրանքի սպառողական փաթեթվածքի վրա դրանք զետեղելու պարամետրերը հաստատելու մասին» N 18 որոշում,
3) Կառավարության 2015 թվականի մարտի 5-ի N 219-Ն որոշում,
4) Կառավարության 2022 թվականի փետրվարի 10-ի N 155-Ն որոշում:

Տեսչական մարմնի ծառայող_____ Տնտեսավարող_____
(ստորագրությունը) (ստորագրությունը) »:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

15.08.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ